

ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ՊԵՐՏԱՍԱՆՈՒՄԻ

Պուշկարիոյ համար	12 մր
Տարեկան	6 "
Վեցամսեայ	15 "
Վեցամսեայ	8 "

Սերիկայի համար	3 ռր.
Տարեկան	1.50 "
Վեցամսեայ	

Իրանացի սոցիալական շարժումը հիմնականում 1900-ական թվականներին ձևավորվել էր Երևանում 20-ական թվականներին և հիմնականում 20-00 թվականներին շարժումը 20-00 թվականներին ձևավորվել էր Երևանում 20-ական թվականներին և հիմնականում 20-00 թվականներին

ՉՈՐԵՔԵԱԲԹԻ

ԻՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂՎԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՐԱՎԱՌԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՔԻ ՕՐԵՐԸ

Նամակ և դրամ դրկի և արագորոքիսն ևս ցեխի

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjourn“ Varna (Bulgarie)

Արտասանմանի համար ձեռք (20 ՍԱՆԹԻՄ) (Պուշկարիոյ համար ձեռք (15 ՍԱՆԹԻՄ) (

Գրութիւնք ևս չեն տրուիր

ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԲԱՇՄԱՆՈՐԻ ԳՐՈՒՄԸ ԲԱՇՆԵԿԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿՈՆԵՐԻՎ ԿՃՈՐԵ

ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆԸ

Սերերու մէջ դուրս եկաւ «Հնչակոյ վերջին թիւը»։ Արդարեւ վերջերս եղբայրագաւ ձեռքերէ հնչակ, կուսակցութեան զլիւն խաղացուած ողբերգութիւնները ցաւով ու սուգով լեցուցին ամէն լաւ հայու սիրտը։ Վերակազմեալներու հետ կատարուած անխորհուրդ «միութիւնը» թէ իրենց և թէ յեղափոխական գաղափարին սուղի նստեցաւ։

Իրենց սուղի նստեցաւ, որովհետեւ անոր հետեւանքով ունեցան զգալի կորուստներ յեղափոխական գաղափարին, որովհետեւ Ռուսիոյ և Անգլիոյ մէջ պատահած դէպքերը յեղափոխութիւնը հայ ժողովրդին, եւրոպական մամուլին ու հասարակաց կարծիքին առջեւ վարկաբեկ ընելու բնոյթը ունին։ Փաստերը եկան իրաւունք տալու «Հայրենիք»ին, որ այն ատեն քննադատութեան ենթարկեց կատարուած միութիւնը և ցցուց անոր աւաղի վերայ հաստատուած ըլլալը։

Մոռնանք անցած սեւ դէպքերը, դիտենք նոր երեւոյթները։ Միութեան քանդումէն վերջ ահա՛ լոյս կը տեսնեն երկու թէ՛ «Հնչակ»ներ։ Այս երկու թիւերը կարողաւոր մարդ կը մնայ զարմացած, որովհետեւ հոն կան զիրար հակասող և իրարու հետ անհաշտ կէտեր, նոյն իսկ կան կէտեր, զորս չենք կարող հաշտեցնել Հնչ. կուսակցութեան նախկին գործունէութեան հետ։ Որո՞ւ միտքէն կանցնէր, որ օր մը հնչ. կուսակցութեան օրգանը պիտի ելլէր ու հաշտէր, «Ո՛չ եւրոպական պետութիւններին աչքին հայկական դատը այլեւս գոյութիւն չունի» և Հայաստանը ներկայացնելով «ուսական նահանգ» մը հայկ. գաղտ պիտի նրկատէր «Ռուսաստանի ներքին գաղտ»։ Եթէ նոյն իսկ Յարի կառավարութիւնը այդ յետին մտքերով առաջնորդուի, միթէ՞ մենք յեղափոխականներս ի՞նչ

տալու ենք, որ ուսը մեզ հետ իր քմահաճոյքներուն համեմատ վարուի, օտնակոխ ընէ մեզ տրուած միջազգային իրաւունքները, չեղեալ նկատէ Պետիւնի 61րդ յօդուածը ու ԳԾԻ մայրական մէջօրանտու մը։ Բայց այս եղբայրացութեանը կուգար Հնչակ իր «նոր գործունէութիւն» վերնագրով առաջնորդող յօդուածին մէջ, «կենտրոնական օրգանի պատգամին արձագանքը կրկնուեցաւ ուրիշ կողմերէ ալ և կարգ մը մարդիկ ջանք թափեցին ապացուցանել, թէ Տաճկահայաստանի ազատագրութեան գործը թիւրիմացութեան արդիւնք մըն է, պէտք է զայն ձգել և սկսիլ «նոր գործունէութիւն»։ Բարեբաղդաբար «Հնչակ» ունեցաւ խելացիութիւն և սկսուած յօդուածը կէս ձգելով չորոշեց «նոր գործունէութեան» ընդհանուր գըծերը»։

Բայց մարգարէ ըլլալու պէտք չկայ այդ «ընդհ. գծերը» հասկնալու համար—«Հնչակ» մեզ պիտի առաջարկէր սօցիալիզմը։

Միտք լաւ և օգտակար սնունդ մըն է, բայց բժշկական գիտութիւնը չի յանձնարարեր մէկ երկու ամսուան երախան միտք վերակրել։ Երբ իրականանայ սօցիալիզմը նոյնպէս ընկերական լաւ ու օգտակար կազմակերպութիւն մըն է, բայց ատոր համար հարկաւոր է քաղաքակրթական որոշ հասունութիւն, որմէ մեր ժողովուրդը զուրկ է զժառանգաբար, ուստի և անկարող սօցիալիզմը մարսելու։ Եւրոպական քաղաքակրթութիւններու մէջ սօցիալիզմի գաղափարը այնքան արդիւններու կը հանդիպի հոն չգտնելով պատրաստ հող։ Նոյն այդ սօցիալիզմը հիմա առաջարկել հայ ժողովրդին, որ կիսակիր ըլլանի մը մէջ կը գտնուի, կը նշանակէ Հասկնալ մեր կարիքները։ Պատմութիւնը կրննանայ աստիճանաբար գարգացման օրէնքով։ Մենք չենք կարող բացառութիւն կազմել և ուստի մով մը հասնիլ հոն, ուր

հասնելու համար ուրիշ ազգեր մղեր են գարբու պայքար։

Ինչո՞ւ իտալացին զհնց իր այնքան երիտասարդ ուժերը ազատ իտալիա մը ստեղծելու համար։ Ի հարկէ անոր համար, որ իտալիա լաւ գիտէր, թէ առանց սեփական անկախ հայրենիքի ես պիտի մնար քաղաքակրթութեան մէջ, Հարսուրդի լուծին տակ չպիտի կարողանար կազմակերպուիլ իբրեւ ուրոյն ուժ քաղաքակրթութեան հետ յառաջ ընթանալու համար։ Ինչ որ իտալիան ըրաւ, ըրին նաև ուրիշ մեծ ու փոքր ազգեր, այդ շրջանէն անխուսափելի կերպով պէտք է անցնինք նաև մենք հայերս։

«Հնչակ»ը իր «նոր գործունէութիւն» առաջնորդող այս ամէնը անտես կառնէր։ Նոր թիւը սակայն կուգայ ուղղել առնուած սխալ քայլը ու կոչ կուղղէ հայ «բանուորին», կապիտալիստին, քաղաքացիին, գիւղացիին և հոգեւորականին իրարու ձեռք տալու ընդհանուր ուժերով դուրս գալ թշնամիին դէմ։ Ուրիշ խօսքով «Հնչակ»ի նոր թիւը կանգնած է ազգայնական հողի վրայ։ Բայց այս պարագային «Հնչակ»ի անմիջապէս իրար յաջորդող թիւերը կը գտնուին հակասութեան մէջ և մեզ կը մատնեն անորոշ դրութեան մը, մանաւանդ յեղափոխական ստրմին մը ներքի չէ թիւէ մը ուրիշ թիւ ծրագիր և ուղղութիւն փոխել։ Ահա երեւոյթ մը, որ կը խանգարէ յեղափոխութեան ներդրանքը յառաջադրուածը։

Պէտք է որոշ ըլլալ։

Այս դիտողութիւնները ընելով մենք բրբէք չենք ուզեր իր առաջին քայլերուն մէջ «Հնչակ»ին արգիլք հանդիսանալ, ընդհակառակը քննադատութեան ենթարկելով մենք կը ցանկայինք, որ ան հաստատուէր ազգային յեղափոխական հողի վրայ և օգտակար կերպով ծառայէր Հայութեան ազգային դատին։

Մարգարէներ

ՌՈՒՍԱԿԱՆ ԼՐՅԵՍՈՒԹԻՒՆ

Այն անխնայ կոնքը, որ ուսակառավարութիւնը հրատարակած է օր ըստ օրէ աճող յեղափոխական կազմակերպութեան դէմ, յառաջ բերած է լրտեսներու, գաւադիրներու, մասնիչներու ցանց մը, որ իր կեդրոնը Ռուսիոյ մէջ ունենալով աշխարհի ամեն կողմ ճիւղեր արձակած է, Իեռ չեն մոռցուած ուսական լրտես և քաղաքացի Սթամպուլովի նախարարութեան օրով սարքած խաղերը և ահա նոր մը կուգայ զայն գերազանցել։

Վերջերս պուլկար կառավարութիւնը իր սահմաններէն դուրս արտաքին Արցախ վայսման անուն ուսմը, որովհետեւ վերջինս բոսթի պաշտօնանները կաշառելով Սօֆիա ուղարկուած նամակներ բացած է։ Ռուսիոյ Սօֆիայի գործակատարը չկարողացաւ իր մտերիմ բարեկամին օգնութեան հասնիլ, որովհետեւ գողութիւնը, որու մէջ նա բռնուեցաւ, շատ վրան բաց էր։

Վայսմանի քաղաքական գործունէութիւնը, որու վրայ օժայթ մանրամասնութիւններ հաղորդեց, շատ յատկանշական է եւ կը ցուցնէ թէ ինչ խախտու հիմերու վրայ կանգնած է ցարի կառավարութեան վերջական կազմը։ Վայսման տղտ մէկն է եւ իր գործունէութիւնը սկսած է թերթերու համար յայտարարութիւններ հաւաքելով, բայց հոստատու ընդունակութիւններ ցոյց տալով յաջողեցաւ պետական պաշտօնի զուխ անցնիլ եւ զրկուեցաւ Գահիթէ, ուրկէ Պուլիս փոխադրուեցաւ։ Նա յաջողեցաւ օր ցերեկով նախ մը մէջ ձեռքարկալի տալ ուս յեղափոխական սպայ Լուցքին, որ յետոյ Միւպերիա արտոնուեցաւ։ Սթամպուլով իրեն կասկածելի երեւցող ուսը երկրէն դուս կը քշէր, անոր մահէն վերջ ուսական լրտեսներու համար գործելու ասպարէզ բացուեցաւ։ Այդ ատենները Վայսման իբրեւ թէ յի վաճառական Սօֆիա հաստատուեցաւ ու ինքզինքը ուս յեղափոխական սուրբ դատին պաշտպանը հոչակեց։ Սթամպուլի փոխտական յեղափոխական ընտանիք մը—այդ և կին—ինկան Վայսմանի լարած ծուղակին մէջ եւ անոր հետ մէկ տան մէջ բնակութիւն հաստատեցին։ Օր մը սակայն տիկին Վայսման իր դրացիին նամակները բացած ատեն բռնուեցաւ։ Գաղտնիքը երեւան ելած էր, բայց Վայսման իր զօրեղ պաշտպաններու միջոցաւ յաջողեցաւ

մանաւանդ որ վերջինս անարդարացի կերպով հեռացնում էր խորի անգամներէն մէկին, որը չէր նրան իրեն կարկել:

Ոսկան Ս.

(Շարունակելի)

ԹԱՏԵՐԱԿԱՆ

Ֆիլիպէի Երգեցիկ - Թատերասէր խումբը ամսոյ 9-ին, կիրակի իրիկուն ներկայացուց իր օգտին՝ Պարոնեանի «Մեծագոյտի» մուրացկանները, երեք արարուած և մեր ներկայ կեանքէն արեւմտեան հրահանգիչ պատկեր մը: «Վրէժը» մէկ արարուած:

Ձանազան կողմնակի պատճառներով խումբը չէր կրցած կանգնաւորապէս տոմսակ պատգնել, այնպէս որ - թէեւ բազմութիւնը բաւական շատ էր... - մեծ բան մը չի մնաց ապահովաբար խմբին:

Դժբաղդարար եղեր են մարդիկ, որոնք օրեր եղած է որ Երգ. Թատերասէրն օգնութիւնը խնդրած են և անոր մասնակցութեամբ տրուած ներկայացումներով հպարտացած օտարներուն առջև, որոնք քանի մը լէզնոց տոմսակ առնել մտած են պիտեմէն ին պատճառ բռնելով: Այնքան օր մը առաջ կամ վերջը Պէնիւնիս խնէշ խաղերը ունկնդրելու գնացած են, և կամ ուրիշներ ալ կիրակին պատճառ բռնած են:

Մեր հասարակութեան գլխաւոր թերութիւնը այն է, որ անպատճառ պէտք է տոմսակը ոտքը սանիս, ազգէս, ստիպիս որ առնէ. եթէ առանց տոմսակ պատգնելու թատրոնը տրուէ, ապահովաբար ծախքն անգամ չեւրար: Մենք թատրոնը չենք փնտրեր, թատրոնը պիտի գայ մեզ փնտրէ: Տակաւին այսքան ետ ենք:

Այսպէս թէ այնպէս սակայն, Երգեցիկ-Թատերասէրը կիրակի գիշեր ունէր ունկնդիր հասարակութիւն մը որ, ինչպէս կերեւայ, կը հետաքրքրուի իրմով և կը ճանչնայ, կը գծադրուի օգտակար ու շինիչ խաղերը: Գալով ներկայացման - չի նայած որ Երգ. - Թատերասէրի մինչեւ հիմակ-

ուան տուած ներկայացումները հայ ներկայ և անցեալ կեանքէն եղած են և առաջին անգամն է որ թեմ կը հանեն «Մեծագոյտի» մուրացկաններուն պէս խաղ մը, կրցան բաւական յաջող դուրս գալ ընդհանուր կերպով:

Ասոր հետ մէկտեղ սակայն, չիմ կրնար չի յայտնել որ գերմ չէր ներկայացուած աչքի գարնոյ թերութիւններէ:

Կեղծաւոր տիպերէն երկու երեքը չի կրցան պատկերացնել իրենց տիպերը ինչպէս որ պէտք է: Գլխաւոր թերութիւնը, որ նշմարեցաւ, ինչպէս որ ուրիշ անթիւ ալ իշխուցած եմ, դերակատարներն ուսնց - չեմ ուզեր ուղղակի մասնանշել գոնէ այս անգամ - դերերին ստիպած չըլլալն էր որք սուֆլէօրէն խօսք սոնետ համար անոր երեսը կը նայէին հասարակութեան զգացելու աստիճան: Ասոնք շատ զգալի պակասութիւններ են:

Միանգամ ընդ միշտ պէտք է ընդգուշի որ գեր մը ստանձնողը պէտք է հետաքրքրուի անով, աշխատի լաւ ստիպիլ, հասկնալ, ուսումնասիրել և մեքենայ չդառնալ:

Եւ այսքանն ալ չի բաւեր. անոնք, որ դերեր կը ստանձնեն, պարտաւոր են երբեմն պիտեմեր ձեռք անցնել ու կարգալ, դերեր ուսումնասիրել մտ անանկ կը կարծեմ որ քիչին են այս տեսակ բանիւ վայ մտածող:

Այս ամեն մանր մունուր թերութիւններով մէկտեղ, ինչպէս ըսի, ներկայացումը նորէն բաւական յաջող էր և հասարակութիւնը գոհ և զըռուարի կերեւար: «Վրէժը» շատ խոր տպաւորութիւն թողուց իր արտուր և միեւնոյն աստեւ կազմութիւնը կողմնակի:

Գլխաւոր դերակատարները յաջողեցան և յստակ կերպով աչքի գարկաւ որ Երգեցիկ-Թատերասէրը հայ ներկայ կեանքէն առնուած ներկայացումները աւելի բնական ու կենդանի կը յաջողի ներկայացնել: «Վրէժին» մէջ միայն հայդուկներուն դիրքը և խօսելու եղանակը լաւ չէր այն աստեւ, երբ պէկը, միլազիմին, տէտէին տունէն էին, իսկ հայդուկները անոր դուան առջեւ:

դուրսը շատ փափուկ դիրքի մը մէջ, Լաւ օգնութիւն մը առաջ բերին հայդուկները իրենց ներկայութեամբ երբ մանաւանդ հրացանները ամեն մէկ անգամն պայթեցան թշնամիներուն վրայ:

Աս անգամուան երկու տարբեր ներկայացումները մեր թատերասէր հասարակութեան մէկ լաւ կողմը երեւան բերին. որ չէ կարելի վեր չի հանել: Ներկայացումէն ետքը յստակ երեւաց որ, հասարակութիւնը աւելի համ կաննէ երբ ներկայացումները կրկնան յեղափոխական ներկայ կեանքէն և ատ կեանքը կուզէ բեմին վրայ տեսնել:

Ասիկա կը անտարակոյտ Երգեցիկ-Թատերասէրի բուն նպատակը - այսինքն հայ իրականութեան փորձականտան ժողովուրդին մէջ, և ինչպէս կերեւայ, բան մը կրցած են ընել:

Եւ, ասկէ ետք - ի հարկ է ժողովուրդին միտքն ու ճաշակը կրթող ներկայացումներուն ալ որոշ չափով մը ոյժ տալով մէկտեղ - պէտք է աշխատի Երգեցիկ-Թատերասէրը ամեն բանէ առաջ հասարակութեան պահանջին գոհացում տալ, հայ իրականութիւնը միշտ անոր աչքին առջեւ պարզել եւ անով հետաքրքրել:

Բամազանի առաջին օրէն Պէնիւնի սկսաւ իր «Կարկանդակ»-աւթուրբ օրինակը: Կերեւայ ներկայացումները խաղալու օրերու մէջ ըլլալուն այնքան բազմութիւն կը խոնտի եղեր որ առաջին օրը արտուր կու անգամ ծագեր է, իսկ թուրքին մէկն ալ բարձր ձայնով կը պաղատի եղեր որ «ալլահ աչքն» գինքը ներս թողուն: Աչքը լոյս Պէնիւնիին... Թղթալից

13 Նոյեմբեր, 1903

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պօրիս Սարաֆով և Թօրթիս խմբագիրը՝ Պ. Վարդօ Մոֆիայի մէջ ունեցած են ընկերական երկարու սիրալիր տեսակցութիւն մը:

«Հայրենիք»-ի մէջ կը կարգանք հետեւեալը:

Երկրէն սեպտ. 10 թաւիկը ըստացած մեր նամակէն կիմանանք թէ թիւրք բանակը տակաւին կը կենայ Սասունի Անտոք սարին ստորոտը, երկու ժամ հեռաւորութեամբ այդ սարին վրայ գիրք բռնած յեղափոխականներէն: Ռէօյթէրի գործակալութեան հոկտ. 25 հեռագիր մը Պօլսէն կը հաղորդէ թէ 8 թնդանօթ Բաղէշէն Մուշ խրկուած են, որովհետեւ հայ յեղափոխ. խմբերը մակեղոնացիներու թաքցումով այսօժ են գործել հիմա:

Իւ արդարեւ մեր նախորդ թիւով տուած տեղեկութիւնը Բասնի կուրներու մասին կը հաստատուի Պօլսէն, թիւրք աղբիւրէն եկած նոյ. 9 հեռագրով մը: Կարինի կուսակալը հաղորդած է թէ երկու խումբ հնչակեաններու սահմանը անցեր են. մէկը ջարդուած է միւսը ռուսական սահմանը փայտած է: Աւելորդ չէ հոս անգամ մը եւս թիւրքերուն սխալը ուղղել: «Հնչակեան» խումբ չէին անոնք ալ:

Վատահելի աղբիւրէ մեզի եկած նամակ մը կը հաստատէ թէ այդ զինակիր խումբերը 3 օրուան արիւնահեղ կուրէ մը ետք տեղի տուած են թշնամու թուով առուելու թեան պատճառով: Հայրեր կորսնցուցած են մօտ 45 հոգի, որոնց մէջ Աբսը Բ. ը իր որդիներով և պուլկարահայեցուած ծանօթ քաջ մը Յովհաննէս Դէվրուզ: Թշնամին (զօրք. թիւրք ու քիւրտ խումբան) հարուստները կորսնցուցած է:

Հայ յեղ. Դաշնակցութեան Ամերիկայի կեդր. Կոմիտէի Ամերիկեան հասարակութեան ուղղած շրջաբերականը, որը թարգմանաբար մենք յառաջ բերած

նշանակել է էն Ռուս Նատեժտա Պէտրովայի հետ...:

Լուրը շարժի պէս ազդեց օրիորդ Փանակեանի վրայ. ինքզինք քիչ էր մնում որ ճար. սակայն իր ամբողջ ուժերը լարելով ինքզինքը զսպան ուղղով փայտալով առարկեց:

Այդ անկարելի է կատար, նախ որ Արշակը ամուսնանալու տրամադրութիւն ունեցող չէր երեւում. երկրորդ որ նա երբեք Ռուսի հետ չի ամուսնանայ: Այդ ինքը մի քանի անգամ և շատերի ներկայութեանը յայտարարել է վճռողական կերպով: Անշուշտ կրկին բամբասանք է. չէ՞ որ մի քանի անգամ էլ այդ լուրը տարածվեց. բայց սուտ դուրս եկաւ:

Այո, Լիզա, մի քանի անգամ այդ լուրը տարածվեց. այն ժամանակ էլ անհիմն չէր. բայց վայրագում: Այսօր այդ լուրը ոչ միայն հիմնաւոր է, այլ բոլորովին ճիշտ է, ևս արդէն միշտ կասկածուած էի ձեր բողոքի գոված Արշակի անկեղծութեան մէջ և դուք ինչ յանդիմանում էիք. չարախօս էիք անւանում: Նրա Քը.

բազեօր լինելը ինձ վաղուց յայտնի էր. բայց ի՞նչ արած որ չէի կարողանում ձեզի հաւատացնել:

Ուրեմն, քո սուտ լուրի հիման վրայ կարելի է եզրակացնել որ մեր յեղափոխական պաշտելի Արշակը յեղափոխութիւն կատարից իր անհատական կեանքի մէջ, ամուսնանալով մի օտար ցեղի պատկանող աղջկայ հետ, այն ժամին երբ պատրաստուած էր իր կեանքը, ետանդը, ձիրքերը գոհարելի Հայրենիքի և իր տառապող ցեղի փրկութեան գործին, դառնութեամբ վրայ բերեց Լիզան. և յանկարծ գլուխը թօթվելով, կարծես ուշքի գալով, շարունակեց. բայց կատար, նորից մեր խոսակցութիւնը շարախօսութեան գոյն ընդունեց: Կարող է պատահել որ Արշակը ամուսնանալուց յետոյ էլ գնայ իր պարտքը և խոստումը կատարելու:

Չէ՞ որ Նատեժտան անձամբ յեղափոխական է. շատ համակիր հայ յեղափոխութեան և հայ ժողովուրդին: Չեմ կարծում որ նա իր ամուսնուն՝ Արշակին թուլանոցի ետ ընկերակող վիճակում գնելու ճիգեր թափի:

Այո, Լիզա, Նատեժտան հայ յեղափոխութեան և հայ ժողովուրդին համակիր էր. բայց մինչև Արշակին ճանկելը. կծու կերպով նկատեց կատարը և ապա ծաղրանքով յարուսակեց. որք ճանկելուց յետոյ ամեն ինչ կը վերջանայ: Սիրելի հայութիւնը այսուհետեւ ամբողջովին կամ փոփոխ Արշակի անձնաւորութեան մէջ, որի սեւ, խոշոր, կրակոտ աչքերից երբեք Նատեժտան զրկվել չի ցանկայ:

Է՛հ, կատար, ինչ կուրիտ կերպով ես խօսում: Միթէ այդպէս կարելի է խօսել մարդկանց մասին:

Ի՞նչի չի խօ. եմ. աւելի զայրացած շարունակեց կատարը: Անշուշտ դու չես կարծի որ ես նախանձում եմ Նատեժտային. ես գիտեմ որ բնութիւնը ինձ զրկել է սիրովեւ արտօնութիւններից. բայց միթէ մեր ընկերակիրները մէջ Նատեժտայից արտուր, խնայել և համակրելի աղջիկ չըկար. որ այդ պարուն ազգասէրը գնաց այդ ստիւի հետ կապվեց: Դու, ուղղակի Լիզայի աչքերի մէջը նայելով, ինչով էիք պակաս այդ

Նատեժտայից. հարիւր անգամ էլ աւելի բարձր ես. այդ ամենքը կը վկայեն:

Ինչի՞ անպատճառ ինձ ես վերցնում, չոր կերպով միջամտեց Լիզան՝ մի քիչ կարմրելով:

Որովհետեւ, որովհետեւ Լիզա, ներողութիւն սիրելիս... դու գէպի Արշակը անտարբեր չէիր:

Սուս, ի՞նչ ես ասում կատար, ինչ իրաւունքով ես ինձ հետ այդպէս խօսում, աւելի բարկացած, բայց լացակուճաց ընդմիջեց Լիզան:

Ը: Կերեւելու իրաւունքով, հոգիս բայց մի վերաւորվիր. մենք հայ ազգիկներս Ռուսուհիների ճարպիկութիւնը չունենք: Մենք շափից դուրս վայրենութեան աստիճանի հասնող մեր զգացմունքները թագցնող ենք: Արշակին դու քի ձեռքով կորցրիր: Բայց աւելի լու նա քեզ չարժեքի... (Շարունակելի)



էինք, տպուած է միայն այն նա-
հանգներու գլխուոր թերթերու
մէջ ու հեռագրուած այս երկրի
բոլոր անկիւնները:

—Պօլսական թերթի մը մէջ
կը կարգանք հետեւեալները:

«Պետերսպուրկէ նոյ. 1 թւով
լուր ելած է թէ՛ Կովկասու Հայ
եկեղեցական կալուածքոյ խնդ-
րոյն մէջ թիւրիմացութիւն տե-
ղի ունեցած ըլլալուն համար նոր
հրահանգ մը պիտի զրկուի մօ-
տերս, թէ՛ կալուածոց մատա-
կարարութիւնը ըստ առաջնուն
պիտի կատարուի բարեք վար-
չութեամբ մը, և կառավարու-
թեան պիտի մնայ ընդհանուր
հակողութիւնը միայն, և թէ՛
ներքին գործոց նախարար Պ.
Բլէհլէ բարեկամական ոճով գը-
րեր է Ս. Հայրապետին թէ՛ սյ-
սուհետեւ կրնայ ուղղակի ներ-
քին գործոց նախարարութեան
գրմել եթէ պէտք ունենայ, և
ո՛չ թէ Կովկասու կուսակալու-
թեան միջոցաւ»:

—«Հէքիմխանէի (Մալաթիա)
Հայերէն խումբ մը՝ որ յառաջա-
գոյն դաւանափոխ եղած էին,
փափաքելով վերագառնուլ ի-
րենց մայրենի եկեղեցւոյ գիր-
կը: Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսէն
հոգեւոր պաշտօնեայ մը խնդ-
րեր են»:

—Վերակազմուած է Վառնայի
ազգ. վարժարաններու «Սանուց
ընկերութիւնը»: Ընկերութեան
նպատակն է հաստատել աշակեր-
տական Կրթարան մը, գնել
ընագիտական և մարմնամարզա-
կան գործիքներ, դպրոցական
պիտոյքներ հայթայթել աղքատ
աշակերտաց: Ընկերութեան կա-
րող են անդամակցել և բաժա-
նորդագրուիլ նաեւ դուրսէն
մարդիկ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Իշխանուհի Կլէմէնդինէի գը-
րած մէկ նամակին վրայ Իերմա-
նիոյ կայսրը 2000 ֆր. զրկած է
ի նպատակեղոնացի գաղթա-
կաններուն և իշխանուհին գրե-
լով իր ցաւակցութիւնը յայտնած
է գժբողգ Մակեդոնացիներուն
կրած վնասներուն համար:

Պօպրանիէի վերջին նիս-
տերուն մէջ վիճարանութեան
նիւթ դարձած է իշխանի զահա
ճառը: —Մակեդոնական Ռարձր.
Կօմիտէի նախկին նախագահը,
հիմա Պօպրանիէի մէջ երես-
փոխան, Սլոյեան Միխայէլօւքի
ճառով մը, որ երեք ժամ տեւեց՝
քննադատեց նախարար Բէթրոֆ

—Բէթրոֆի ընտրութեանց մի-
ջոցին բռնած ընթացքը. քն-
նադատութեան ենթարկեց նոյն-
պէս նախկին նախարար Տանէֆի
գործերը: Բազարով, Յանքո-
վիտ մը փորձեց Տանէֆը պաշտ-

պանել. բայց կառավարականնե-
րը ազմուկ հանեցին և չձգեցին,
որ շարունակէ:

Միխայէլօւքի խնդրի առա-
կայ պիտի դարձնէ նաեւ մակե-
դոնական հարցը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ք Ո Ւ Ր Ք Ի Ա

Վերջապէս Բ. Դոռը պատաս-
խանեց երկու պետութիւնց դէս-
պաններուն և յայտարարեց, որ
սկզբունքով կնդուծի Միւրցշթէ-
կի ծրագրին ինք գլխաւոր կէ-
տերը, իրեն կը վերապահէ սա-
կայն վերջը մասնաւոր կէտերու
մասին լանտկցիլ և պետութեանց
հետ համաձայնութեան մը գալ:

Պարոն Ֆօն Կալթէ և Չիւնօվի-
էֆ երեք տրամագիր շնն զի-
ջումներ ընել և խնդիրը ձգձգել:
—Իր քական բանակի մէջ զգա-
լի եղած է սպանելու պակասու-
թիւն:

ՌՈՒՍԻԱ

Քիշնէվի մէջ պատահած հն
ուսանողական խռովութիւններ:
Ուսանողները խռմբով հաւաք-
ուեցան համալսարանի սրահին
մէջ և կուղէին ինկած ընկերոջ
մը յիշատակը տօնել. զանոնք
ցրուելու համար ոտիկանու-
թեան վանքերը իլուր անցան:
Յոյցը երթալով մեծ ծաւալ ըս-
տացաւ, որովհետեւ Պօլիտէխնի-
կումի աշակերտներն ալ մասնակ-
ցեցան: Զօրքը միջամտեց և
ցուցարարները ցրուեց:

ԳԵՐՄԱՆԻԱ

Իշխանուհի Եէնպուրկ—Վալ-
տէնպուրկ ամուսինը ձգելով իր
կառապանին ընկերակցութեամբ
Իտալիոյ Սօրի քաղաքը փախած
է ու կաշխատի Հռովմէն ապա-
հարզանի իրաւունք ստանալ:

—Պէտլինի մէջ վերջերս իրև
լուծակահար մեծ համբաւ հա-
նեց 10 տատկան երթալ մը:
Կայսրուհիին ներկայացուած է ե-
րթալն, որ անոր հետ խօսած է
իրր: Եւ մօրաքոյր մը:

Ա Ւ Ս Տ Ր Ի Ա

Ինսպուրկի համալսարանին
մէջ արգիլուեցան իտալերէն
լեզուով դասախօսութիւնները:
Իտալացի ուսանողները սարքե-
ցին բողոքի ցոյցեր:

ԱՄԵՐԻԿԱ

Ամերիկա տարորինակութեանց
աշխարհն է: Վերջերս Նիւեօքք
ցի միլիօնատէր մը 25,000 ֆր.
առաջարկեց սկանլ մը գնելու

համար, որովհետեւ ամուսնանալ
կարենալու համար իրեն սկանլ
մը կը պակսէր: Հարիրաւոր
մարդիկ ներկայացան իրենց ա-
կանջը ծախելու համար, վիճա-
կը ելաւ գերմանացի գլխեպանի,
որու սկանլը յարմար մեծու-
թիւնը ու ձեւը ունէր:

12 օրէ ի վեր ծախող և գնող
գլուխին իրարու կնպած պառ-
կած են անկողնի մը մէջ: Դեռ
ականջին վերի մասը միայն փո-
խադրուած է, եթէ արիւնը ըս-
կալի շրջան ընել միւս մասն ալ
պիտի փոխադրուի, հակառակ
պարագային գնողը ետ պիտի
վերագրանէ գլխեպանին իր ա-
կանջը:

Մախողին և գնողին անուննե-
րը յայտնի չեն: Միջնորդողը
բժիշկ մըն է:

ՉԻՆԱՍՏԱՆ

Չինական 13 նահանգներու
կառավարիչները և փոխարքաներ
առաջարկեցին կառավարութեան
տրամագրութեան տակ գնել Եւ-
րոպայի սպանելու միջոցով մար-
դուած 90,000 զօրք Ռուսիոյ դէմ
արշաւելու և զայն Մանչուրի-
այէն արտաքսելու համար:

ՖՐԱՆՍԱ

Ֆրանսայի մէջ կը հիւրասիր-
ուին անգլիացի գիւնադէտներ
և քաղաքակուս գործիչներ: Լու-
պէ ճաշկերոյթի մը առթիւ հե-
տեւեալը խօսեցաւ:

«Հաակի մէջ սկսուած գործը
կընդհանրանայ: Արեւմտեան
երկու ազգերը կարող են հպար-
տանալ, որ իրենք օրինակ տու-
ին և հաստատեցին հաշտարար
ատեան մը: Օրինակը իրեն հե-
տեւողներ պիտի ունենայ. շար-
ժուած պիտի մեծնայ և մեր փա-
փաքն է, որ խաղաղութեան Կոր-
ժը յաջողութեամբ պսակուի»:

Ճաշկերոյթին ներկայ էին 250
ֆրանսացի երեսփոխաններ:

Տէսթո. րնէլ տը Գօնթան ող-
ջունեց Ֆրիտէրիկ Բասին, որ
իր կեանքը նուիրած է խաղա-
ղութեան գործին և հաշտարար
ատեանը կազմելու համար այն-
քան աշխատած:

Ժօրէս յիշատակելով երկու
ազգերու ունեցած պատերազմնե-
րը յայտարարեց, որ սխեմու-
թեան ոգին վերցուած և անոր
տեղ է հաստատուած բարեկամու-
թիւն: Ժօրէս խոսեց ընդհանուր
զինաթափութեան համար: Խօ-
սեցան նաեւ Բօմպ և ուրիշներ:

Ժողովը Անգլիոյ թագաւորին
հեռագիր մը ուղղեց, որու մէջ
չօշափելով երկու ազգերու մէջ
կնքուած ուխտը, ցանկութիւն
յայտնեց որ անիկա արգիլուաւոր
ըլլայ համաշխարհային խաղա-
ղութեան համար:

Ն.ՄԱԿԱՏՈՒՓ

Ռուսուցի — Կեսարացի Որշ.
Թորգոմը իբրև Ուս. Միութեան
անունը շահագործող մարդ նկա-
րագրող թղթակցէն կը խնդ-
րենք, որ այս մասին մեզ շուտով
հաղորդէ մանրամասն տեղեկու-
թիւններ և որոշ փաստեր: (Յիշ-
եալ պարոնը ու է տեղէ իրա-
ւունք չէ ստացած Ուս. Միու-
թեան անունով խօսիլ):

—Թավրիզ.— Լաւրանական ըն-
կեր. վարչ.— հաճեցէք մեզ զը-
կել 23 օրինակ Տօք. Փաշայեա-
նի «Մրախաների» անունը զըր-
քոյկէն, ուղղ կայ:

— Յիւրիս. Գ.Ի. կը գրուի ձեզ:

ԿԱՐԵՒՐ ԱԶԻ

Ճամբորդներու Համար

Նախկին Օթէլ Ռօստօփի և այս
ամառ Հիւսարի մէջ Օթէլ Պուլկարիսի
վարձակալ Աստիկ Սրապեան, այժմ
բացած է պանդոկ մը Ֆիլիպէի Մեծ
փողոցին վրայ:

ՕՐԷՆ ԱՍՆԻՐԱԼ

Անուամբ: Յաճախորդները գոհ
պիտի մնան մաքուր սենէն և արագ
ծառայութենէն:

Տեօրէն

Աստիկ Սրապեան

6 Նոյեմբեր, 1903

Ֆիլիպէ

2-12

Թ. Ա. Տ. Ր. Ա. Ն.

Նատէժտա Հայ դերասանական
խումբը վաղ երեկոյ ներկայացում
պիտի տայ Տէրեւ տիկին Յակոբեա-
նի մասնակցութեամբ եւ Տ. Վ. Պա-
պեանի առաջնորդութեամբ:

Մրագիր

1. «Սեւագարը» բարոյալից —
Թատերախաղ 3 արար
2. Պար եւ երգ Օր. Օլկա եւ Հ.
Յամր Բէթոյէանի կողմէ:
3. Հովիւք եւ հովուհի եռաձայն
երգ Տ. Տ. Պապեանի, Յակոբեանի և
Օր. Վեհանուշի կողմէ:
4. «Ապտի Կոչակարը», ծիծաղա-
յութ գաւեշտ 1 արար
5. Պար եւ երգ ամբողջ դերասանա-
խումբին կողմէ

Ուրբաթ գիշեր

1. «Որդեպանը»
թատերաղ. 1 արար
2. Վիշեր բարիս —
Խիստ ծիծաղալար զաւեշտ 1 արար
3 «Կեցցէ՛ նաւապետը»
զաւեշտ 1 արար

Լաւ տեղեր գրաւել ուղղորդեց թող
անաւարեն կանուխէն գնել տոմսկե-
ները:

Գիշերը չափաւոր

«Նախճատ»

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница «Взаимность» Варш